

Մտեփան Գրիգորյան, սեպտեմբերի 25, 2015թ

**Ուսումնասիրություններ եւ առաջարկներ՝ կատարված Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի փորձագետների կողմից՝ Հայաստանի իշխանությունների կողմից առաջարկված Հայաստանի Սահմանադրության փոփոխության Նախագծի շուրջ:**

Մեր առաջարկները հիմնականում վերաբերում են Սահմանադրության փոփոխության Նախագծի այն դրույթներին, որոնք կապված են մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հետ:

Նշենք, որ յուրաքանչյուր երկրում յուրաքանչյուր սահմանադրական փոփոխություն պահանջում է պատասխան հետեւյալ հարցերին.

- 1) Որքանով հասունացած եւ հիմնավորված են Սահմանադրական փոփոխությունները
- 2) Որքանով են տվյալ երկրի քաղաքացիները (այլ ոչ միայն քաղաքական էլիտան) տեղեկացված առաջարկված փոփոխությունների մասին եւ ընդունում են դրանց անհրաժեշտությունը
- 3) Հայաստանի դեպքում նաեւ շատ կարեւոր է հասկանալ, ինչն է այսօր առաջնային. մշտապես փոփոխություններ կատարել գործող Օրենսդրությունում եւ Սահմանադրությունում, թե սկսել հարգել եւ հետեւողականորեն կյանքի կոչել գործող օրենքների եւ Սահմանադրության դրույթները

Պետք է նշել, որ լուրջ անհանգստությունների տեղիք են տալիս արդեն իսկ փաստերը, որ Նախագծում մտցված են հողվածներ, որոնք թույլ են տալիս ՀՀ նախագահին ընտրել ոչ ուղղակի քվեարկության միջոցով, նաեւ հնարավորություն է տրվում անցկացնել Սահմանադրական փոփոխությունները ոչ հանրաքվեի միջոցով (Ազգային Ժողովում քվեարկության միջոցով՝ շրջանցելով երկրի քաղաքացիներին), ինչպես նաեւ փաստացի հրաժարումը տեղական մարմինների ղեկավարների ընտրություններից: Փաստորեն, ՀՀ քաղաքացիները, համաձայն Սահմանադրության փոփոխությունների Նախագծի, տարբեր մակարդակների ընտրություններում զրկվում են հինգից երեք ձայնի իրավունքից: Հայաստանում ուղղակի ընտրությունների միջոցով ընտրվելու են միմիայն Ազգային Ժողովը եւ Ավագանու Խորհուրդները:

Ստորեւ ներկայացնում ենք մեր դիտողությունները՝ ներկայացված փոփոխությունների Նախագծի շուրջ.

1. Սահմանադրության նախագծում (հ.61) տարօրինակ կերպով բացակայում է գործող Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված մի դրույթ՝ «Հանրության բարքերի...պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում... կարող է արգելվել» (հ.19, մաս 2): Այս բացթողումից բխում է, որ նախագծի 61-րդ հոդվածում նույնացվում են «հրապարակայնություն» և «դոմբաց դատական քննություն» հասկացությունները, ինչը կոպիտ սխալ է, որքանով հրապարակայնությունը շատ ավելի ընդգրկուն է, քան դոմբացությունը: Ամենին պատահական չէ, որ միջազգային փաստաթղթերում այդ դրույթը զբաղեցնում է պատշաճ տեղ (օրինակ, Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (հ. 6)): Նշված դրույթի բացակայությունը նշանակում է մարդու դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքի լուրջ խաթարում:

Նախագծի 61-րդ հոդվածում բացակայում է նաև «Հավասարության պայմաններում» բառակապակցությունը, այնինչ այդ արտահայտությունն ունի սկզբունքի նշանակություն, և դրա անտեսումը նույնպես վտանգում է արդար դատաքննության իրականացմանը:

Մյուս խնդիրը կապված է մի շարք հոդվածներում (հհ. 82,83,84,85) ամրագրված այն ձևակերպման հետ, որ այդ համապատասխան իրավունքները իրագործվում են ոչ թե Սահմանադրությամբ, այլ օրենքներով: Այսինքն իսկապես ստացվում է, որ աշխատանքային պայմանների իրավունքը, արձակուրդի իրավունքը, սոցիալական ապահովության իրավունքը և այլն ամրագրվում է ոչ թե Սահմանադրական մակարդակով, այլ օրենսդրական:

Մյուս կողմից, որոշ հանրաճանաչ իրավունքներ, առհասարակ բացակայում են, օրինակ, կենսապայմանների բարելավման իրավունքը:

2. Գործող Սահմանադրությամբ համայնքի տնօրինությանն էր հանձնված համայնքի ողջ սեփականությունը, ինչը հղի է վտանգավոր հետևանքներով: Բացի այդ ամբողջությամբ անտեսված է համայնքի բնակիչը, որը որևէ ձևով չի կարող մասնակցել համայնքային սեփականության տնօրինմանը: Այսպիսի սկզբունքային սխալ մոտեցումը ըստ էության պահպանվել է նաև Նախագծում (հ.183): Բացի այդ համայնքի բնակիչը որևէ ձևով չի կարող միջամտել համայնքի ավագանու իրավական ակտերի և համայնքի ղեկավարի որոշումների ընդունմանը կամ դրանք բողոքարկել: Այսինքն այն ամենը ինչը հանդիսանում է հանրային սեփականություն օտարված է բնակչից:

3. Գործող Սահմանադրությամբ սահմանված է, որ «Պետությունը երաշխավորում է... անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությանը և գործունեությանը » (հ.27, մաս 4), սակայն Նախագծում էապես փոխված է այդ դրույթը, որում այլևս բացակայում է Հանրային հեռուստատեսության և ռադիոյի անկախության երաշխավորվածությունը (հ.41, մաս 2): Բացի այդ,

Հանրային հեռուստատեսության և ռադիոյի նկատմամբ սահմանվել է նաև վերահսկողություն, որը պետք է իրականացնի Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (հ.195, կետ 3):

Մեր համոզմամբ, Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն պետք է գտնվի միայն հասարակական հսկողության և վերահսկողության ներքո:

4. Նախագծի 8-րդ հոդվածով նախատեսված է, որ Կուսակցությունների գործունեության հավասար պայմանները երաշխավորվում են օրենքով, այնինչ անհրաժեշտ , որ այդ երաշխավորությունը սահմանվի հենց Սահմանադրությամբ:

5. Այդ նույն հոդվածից հանված է գործող Սահմանադրությամբ նախատեսված (հ.7, մաս 3) կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնությանը վերաբերող չափազանց կարևոր դրույթը:

6. Նախագծով նախատեսված է (հ.24, մաս 2), որ հոգեկան անձեռնմխելիության իրավունքը ինչ-որ դեպքերում կարելի է սահմանափակել:

7. Նախագծով նախատեսված է (հ.34, մաս 3), որ ամուսնության ազատությունը կարող է սահմանափակվել հանրային շահերի պաշտպանության նկատառումներով:

8. Հանրագրեր ներկայացնելու իրավունքի հոդվածում (հ.52) բացակայում է գործող Սահմանադրության հ.27.1-ում զետեղված չափազանց լուրջ մի հատված. «անձնական կամ հասարակական շահերի նկատառումներով», ինչը կարծում եմ լուրջ բացթողում է:

9. Նախագծում չկա այնպիսի կարևոր մի դրույթ, ինչպիսին է «ՀՀ քաղաքացին չի կարող հանձնվել այլ պետության»:

10. Նախագծի 65-րդ հոդվածում ամրագրված է, «Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված...ապացույցի օգտագործումն արգելվում է». Իսկ այլ իրավունքների խախտումով ձեռք բերված ապացույցը կարող է օգտագործվել: Կարծում եմք, «հիմնական» բառի փոխարեն, պետք է լինի «մարդու իրավունքների» բառակապակցությունը, որքանով հիմնական են համարվում միայն Սահմանադրությունում ամրագրված իրավունքները:

Նույնը վերաբերում է նաև 81-րդ, 30-րդ և մի շարք այլ հոդվածներին:

11. Ժողովրդավարությունից լուրջ շեղում է համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունը (հ.180): Եթե գործող Սահմանադրությամբ անուղղակի ընտրություն նախատեսվում էր միայն Երևանի համայնքի համար (հ.108), փաստորեն որպես բացառություն, ապա Նախագիծը այն տարածել է բոլոր համայնքների նկատմամբ:

12. Բարձրագույն դատական խորհուրդը դատավարներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության (հ. 174, կետ 8.): Այս դրույթը ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ կիրառելը կնշանակի կասկածի տակ դնել Սահմանադրական դատարանի դատավորի անկախությունը:

13. Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ցուցաբերի քաղաքական զսպվածություն (հ. 192, մաս 4): Այս դրույթը շատ հեղհեղուկ է և անհասկանալի է թե ով պետք է որոշի զսպվածության չափն ու աստիճանը, մյուս կողմից, մարդու իրավունքների ոլորտը ամենամեծ քաղաքականությունն է և Պաշտպանը գտնվում է իշխանության դեմ անընդհատ պայքարում:

14. Լուրջ մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ բազմաթիվ պաշտոնատար անձանց ԱԺ-ն նշանակում և աշխատանքից ազատում է ձայների 3/5-ով: Բացի այդ 3/5 (60%) շատ ցածր է, և ըստ էության կարող է ընտրվել առանց ընդդիմության ձայների:

15. Բացի նախագծում եղած անկախ հանձնաժողովներից մյուս նմանատիպ հանձնաժողովները Սահմանադրության մեջ արտացոլված չեն ( օրինակ՝ Սակագների հանձնաժողով, Տնտեսական մրցակցության հանձնաժողով): Առավել ևս ապագայում հնարավոր է, որ այլ տիպի նման հանձնաժողովների անհրաժեշտություն լինի: